զի դեռևին չկպչի, կանչում էր, պոռում, աղաղակում:

Ցեխի եւ ձիւնի մէջ խողը առաջանում էր դժուարութեամբ: Իր մեծաքանակ ճարպը, հոպիտի ծանրութիւնը, նոր ցեխի եւ նոր աղբի անուշ հոտը, ջրակոյտերի լպրտուն բուրումը գլխի մէջ գինովութիւն էին դրել եւ ոտքերի մէջ թուլութիւն:

Պրոֆմիութեան շէնքի առջեւ խողը խըռընչեց:

Պետթատրոնի դռան առջեւ, ճիշդ այն ժամանակ երբ պրիմադոննան՝ ժողովրդի աչքին փայլելու համար՝ պատրաստւում էր կեղծաւոր ժպիտով նրան դիմաւորելու, խողը յանկարծ կանգ առաւ եւ աղմկալից շռեց:

Պրիմադոննան անմիջապէս ժպիտը փոխեց եւ Օֆելիայի վշտահար դիմակ առաւ:

Սակայն, ժողովուրդը ուրախ էր, գոհ: Ինչ էր մնացել, որ քաղաքը տօնական ընոյթ առնի, խանութները փակեն, կարմիր դրօշակ բարձրացնեն: Ամբոխը խռնուել էր շքերթի շուրջը, աղմկում էր, կատակ անում, ու հրապիտների թմբուկը եւ բորոզանը հնչում էին յաղթական: Արուեստ փողոցի սկզբում այնքան շատ մարդ կար, որ խողը չէր կարողանում առաջանալ, եւ մինչդեռ բորոզանը մի վայրկեան լռել էր, պետական հեռաձայները տենդով ձայնում էին:

Զեկան կանչում էր Կենդկոմին, Կենդկոմը գործկոմին, գործկոմը միլիցիապետին:

Դա ի՞նչ խայտառակութիւն է... Բուրժուական մտայնութիւն, անբարոյականութիւն... Խողը այդքան պատիւներով պիտի ա՞նցնի Կենդկոմի շէնքի առջեւից... Խո՞ղը, ո՛չ պրոլետարական այդ շորսոտանի արտիստը, որին վաշխառուները բերել են Հայաստան շահագործելու համար, պիտի վայելէ այդպիսի, չտեսնուած ընդունելութի՞ւն:

Արգիլե՛լ:

Արգիլե՛լ:

Արգիլե՛լ:

Մարդաբ աղայի սրճարանի առջեւ, հրացանը ուսին մի միլիցիական, շնչասպառ կանգ առեց, խողի առջեւը կտրեց եւ շքերթը արգիլեց:

Խողը տարին կրկէս:

Ժողովուրդը ցրիւ եկաւ:

Կոնդի վրայից չոր հով էր իջնում: Ամէն մարդ մրսում էր:

* * *

Խողը դարձաւ մի տեսակ հերոս:

Ամէն մարդ նրա մասին էր խօսում: Երեւանցիները, յոգնած ամենօրեայ տաղտկալից եւ նոյնանման կեանքից, գտել էին վերջապէս չեզոք մի հող, ուր կարող էին իրենց սուր երեւակայութիւնը մարզել:

Խողը, երանելի այդ արարածը, հեռաւոր երազի նման, կոմունիստական դաժան աշխարհին թեւեր էր տուել, բթացած քաղաքացիների առջեւ բաց էր արել տարբեր մի լինելութեան հեռանկարը, թեթեւացրել ամենօրեայ լուծը, արթնցրել նախկին աղատ կեանքի անուշ վերյիշումները, բերել էր պատրանք, անկեղծութիւն, անմիջականութիւն:

— Խողը տեսա՞ր:

— Տեսայ, աղպեր, հի՛անալի ա...

— Խողը տեսա՞ր:

— Բա՛, վայրենի խոմ չենք, տեսայ, ինչպէ՞ս չտեսայ...

Կրկէսի ետեւի կողմում խողի համար մի փոքրիկ սենեակ էին շինել: Մենակեաց, լուռ, խուցը քաշուած վանականի նման, օրուան մեծ մասը նա անց էր կացնում նստած, փոքրիկ աչքերը յառում էր փայտէ պատին ու երազում: Երբեմն վեր էր կենում, քիթը շարժում թափած յարդի մէջ, մսերը տատանելով պտոյտ գալիս ու յոգնած, մեծ իմաստութեամբ համակերպում ճակատագրին, պառկում ու նորից երազում: Թափանցող աչքը նրա երեսին կարող էր կարդալ որոշ մելամաղձոտութիւն: Անորոշ այն մելամաղձոտութիւնը, որ գալիս նստում է արտիստների եւ խորհողների սրտի վրայ, երբեմն յղի է անակնկալներով, նախազգացումներով:

Նոր այս երկիրը, ուր նա եկած էր, թրթռուած աղբի եւ իւղոտած կաշուի տարօրինակ հոտ ունէր: Պատերի ծակերից ցուրտը գալիս սուր ակռաներ էր մխրճում նրա մսերի մէջ, մտրակում փորը ու քթի ծակերին քրտինքի եւ փոշիացած թրիքի անախորժ բուրում սրսկում:

Սակայն, խողը համակերպող էր եւ իմաստուն: Հլու, մեղմաբարոյ, քրիստոնէական պարզութեամբ եւ անկեղծութեամբ նա կատա-

Հայ մատենագրության թուանշանային գրադարան